



24. ԵՐԿՈՒ ԴՆՌՎՈՒՇ

Ըսպահան շհարի մեջը Շահօղլի Շահ Աբբասի դավրին էրկու դավուլ են ըլելի, տահ էրկուսն էլ փանանգի փոստե խոխան թևերին, մե ծեռները նաջադ, մեկը քանչկուլ, շհարը, չառսու-բազառ շուռ են իկալի:

Դը հարի տես, որ տանցեն մեկը կանչելի.—Յա՛ Մահմուդ:

Ամը էն մեկէլը կանչելի.—Յա Մահբուր:

Էրկսով էլ հա էտենց կանչելով շուռ են իկալի:

Մեկ օր Շահ Աբբասը վերցելի քառսուն խատ ոսկի լըցելի մե լանգանու մեջ, վրանցեն էլ թնփանսի-դանրան փլավ ի լցել տալի, նոքանին ասելի, որ տանի, տա էն դավուլչին, որ ուր անունն ի տալի: Նոքանը տանելի տալի «յա Մահմուդ» կանչող դավուլչին: Դավուլչն առնելի լանգանին, փլավն իրեսեն ուտելի, կշտանալի, մնացած տակինը տալի մեկէլ դավուլչին, որ ուտի...

Մնալի մեկէլ օրը Շահ Աբբասը տանալի, որ էն «յա Մահմուդ» կանչող դավուլչը կո էլը կանչելով շուռ ի իկալի:

Կանչելի տալի դավուլչին, խառցուցելի.—Դավուլ՛ւչ, էրեկ փլավն ստացա՞ր...

—Ստացամ, թաքավորն ապրաց կենա:

—Ի՞նչ անիր:

—Վրայեն ես կերամ, կշտացամ, մնացածը տվի՞մ ինգերիս...

—Բանի,—ասելի Շահ Աբբասը,—վերմասըն Մահբուր, նեյնասըն Մահմուդ⁷...

7 Թե չտա Աստված, ի՞նչ անի արքան (Ծ.Ա.):